ԱՊՐԻԼԻ 24՝ ՀԱՅՈՑ ԵՂԵՌՆԻ ՋՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐ

Ապրիլի 24-ի առավոտյան Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ուղեկցությամբ թեմական առաջնորդների եւ Մայր Աթոռի միաբանների այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու բյուրավոր հայ նահատակների հիշատակին:

Հուշահամալիրում Ամենայն Հայոց Հայրապետը եւ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը ծաղկեպսակներ զետեղեցին, ապա Նորին Սրբության նախագահությամբ եւ ՀՀ Նախագահի եւ հայոց պետական ավագանու ներկայությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն:

Նույն օրը Մայր Աթոռի Միածնաէջ Սուրբ Տաճարում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի միաբան Տ. Արտակ եպիսկոպոս Տիգրանյանը: Արարողության ընթացքում օրվա խորհրդի մասին Ամենայն Հայոց Հայրապետն աշխարհասփյուռ հայ ժողովրդին հղեց իր պատգամը:

Ս. Պատարագի ավարտին Մայր Տաճարի հարեւանությամբ ի հիշատակ 1915 թ. Հայոց Եղեռնի նահատակների կանգնեցված Աղոթքի եւ ուխտի խաչքարի մոտ կատարվեց հոգեհանգիստ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԲԱՔՎՈՒՄ ՄԱՄՆԱԿՑԵՑ ԿՐՈՆԱՊԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎԻՆ

Ապրիլի 26-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շքախմբի ուղեկցությամբ ժամանեց Ադրբեջանի մայրաքաղաք Բաքու՝ մասնակցելու Բաքվում գումարված կրոնապետների համաշխարհային գագաթնաժողովին՝ նվիրված կրոնների եւ ավանդական արժեքների վրա համաշխարհայնացման ազդեցության խնդիրներին:

Այցի ընթացքին Նորին Սրբությանն ուղեկցում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը, միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրեն Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը, Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի տնօրեն Տ. Վահրամ քահանա Մելիքյանը: Համաժողովին մասնակցում է նաեւ ԱՄՆ Արեւելյան թեմի միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանը՝ որպես ԱՄՆ եկեղեցիների ազգային խորհրդի նախագահ:

Ժամանումից հետո Նորին Սրբությունը մեկնեց «Գյուլիստան» պալատ, ուր տեղի ունեցավ գագաթնաժողովի պաշտոնական բացումը: Բացման արարողությանն Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խոսքն ուղղեց ներկաներին:

Ցանկապատվածը